ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆՅԱՆ «ՀԻԶԲԱԼԼԱՀԸ» ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Իսլամի պատմության նպաստաբերիչ շրջանի համար առավել հատկանշական է դարձել կրոնաքաղաքական շարժումների ակտիվացումը, որոնց հիմքում թեև ընկած է աստվածաբանական ենթատեքստը, այնուամենայնիվ, առավել հստակորոշման ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ իսլամի դրոշի տակ հանդես եկող հասարակական-քաղաքական խմբավորումները նվազագույն չափով են կապված կրոնական ու հոգևոր ուղղությունների հետ՝ հիմնավորապես առաջնորդվելով սոցիալ-տնտեսական և քաղաքական նկատառումներով: Ակնհայտ է, որ իսլամիստների գործունեության ակտիվացմանը նպաստեց մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը՝ զգալիորեն ընդլայնելով տարածաշրջանի հակամարտությունների շրջանակը, որոնց ուժային դաշտը համարվում էր արաբա-իսրայելական հակամարտությունն ու համաշխարհային երկու հակամարտող համակարգերի առճակատումը: Իսկ արաբա-իսրայելական պատերազմներում սեփական իշխանությունների կողմից «փոքր» Իսրայելին հաղթելու անկարողությունը, ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականությունը և «չափավոր» արաբական վարչախմբերի հետ ԱՄՆ-ի համագործակցությունը, մուսուլմանական միջավայրում Սիացյալ Նահանգների և նրան սատարող երկրների ու քաղաքական ուժերի նկատմամբ ծայրահեղ հակակրանք և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծեցին:

Վերոհիշյալ գործընթացների համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի ինչպես գլոբալ ու տարածաշրջանային, այնպես էլ կլանային ու ներհամայնքային հակամարտությունների մարտադաշտի վերածված Լիբանանը, որտեղ 70-ականներին ամուր պետականության բացակայության, միջհամայնքային հակասությունների սրման հետևանքով նրանց միջև հաստատված դաշինքի[1] թուլացման արդյունքում սկիզբ առած ճգնաժամը, զուգակցվելով պաղեստինյան գործոնի հետ, արտահայտվեց կրոնա-դավանական համակարգի դեմ պայքարի

շարժումներով և ձախաթևյան կազմակերպությունների վերելքով: Վերջիններս, հիասթափված աշխարհիկ կուսակցությունների կողմից ներքաղաքական իրավիճակի կարգավորման անգործությունից, առկա խնդիրների լուծման ճանապարհը տեսնում էին «ճշմարիտ իսլամին» վերադառնալու մեջ:

Երկրում տեղ գտած ժողովրդագրական փոփոխություններով էր պայմանավորված նաև գերակշռություն կազմող մուսուլմանների կողմից ստատուս քվոյի մերժումը[2], որոնց դժգոհությունն արտահայտվում էր տարբեր քաղաքական հոսանքների ձևով՝ բևեռացնելով հասարակությունը՝ ի վերջո թուլացնելով երկրի քաղաքական համակարգը:

Ուստի պատահական չէ, որ այդ գործընթացներում մեծ դերակատարություն ունեցավ երկրի խոշորագույն, սակայն տնտեսապես ամենաանապահով և քաղաքականապես վատ կազմակերպված շիա համայնքը[3], որին ներկայացնող կրոնաս-քաղաքական կազմակերպությունները հանդես եկան իրենց նկրտումներին այլևս չհամապատասխանող պետական կրոնալավանական համակարգի վերացման օգտին:

Շիա համայնքի զարթոնքը մեծապես պայմանավորվեց նաև Մուսա Սադրի խարիզմատիկ անձով, որը 1974 թ. գլխավորեց շիա նշանավոր կրոնական առաջնորդներին միավորող Գերագույն իսլամական խորհուրդը՝ սկիզբ դնելով քաղաքական հավասարության և սոցիալական արդարության համար պայքարող «Զրկվածների Շարժմանը», իսկ 1975 թ. հիմնադրելով շարժման զինված թևը՝ «ԱՄԱԼ» կազմակերպությունը[4]:

«ԱՄԱԼ»-ի հզորացմանն ու Լիբանանում շիա շարժման արմատակնանցմանը նպաստեցին մի ամբողջ շարք իրադարձություններ՝ 1975 թ-ից սկիզբ առած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, 1978 թ. Մուսա Սադրի անհետացման հանգամանքը, 1979 թ. Իրանի իսլամական հեղափոխությունը, 1978 և 1982 թթ. Իսրայելի ներխուժումները Լիբանան և այլն: Մուսա Սադրի անհետացումից հետո[5] Լիբանանի շիա համայնքը արաբ ազգայնականներից ու ձախականներից իրենց հայացքներն ուղղեցին դեպի «ԱՄԱԼ»-ի կողմը, որի ղեկավարությունը, Նաբիհ Բերիի գլխավորությամբ, կղերականից վերածվեց աշխարհիկի: Վերջինս, չնայած Իրանի հետ ունեցած կապերին, «ԱՄԱԼ»-ը տարավ ազգայնական ճանապարհով, որի նպատակը մյուս համայնքների հետ քաղաքական և տնտեսական հավասար պայմանների ստեղծման ուղղությամբ բարեփոխումների իրականացումն էր[6]:

Այնուհետև, Իրանի հեղափոխությունից հետո, Թեհրանը ձգտում էր «իսլամական հեղափոխությունն արտահանել» Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներ՝ իսլամը որպես ազդեցության տարածման լծակ օգտագործելով վերջիններիս նկատմամբ: Ուստի, օգտվելով 1982 թ. հունիսին Իսրայելի կողմից Լիբանան ներխուժելու հանգամանքից, Իրանը, Սիրիայի թույլտվությամբ, Բեքաայի հովիտ (որն այդ ժամանակ Սիրիա-

յի վերահսկողության տակ էր գտնվում) ուղարկեց «Իրանի հեղափոխական պահակազորի» 1000 փասդարանների[7]՝ Լիբանանի իրանամետ շիա շարժմանն օգնություն տրամադրելու նպատակով: Եթե 80-ականներին շիա համայնքում իր դիրքերն ամրապնդած Նաբիհ Բերին չէր ցանկանում ազդեցությունը կորցնել դեպի Իրանը կողմնորոշվող իր համայնքի նկատմամբ, ապա Սիրիան չէր ցանկանում Թեհրանի կողերական վարչախմբին Լիբանանի ներքին գործերում ուղղակի միջամտության հնարավորություն ընձեռել[8]: Իրանն իր հերթին, հզոր քարոզարշավ կազմակերպեց Նաբիհ Բերիի նկատմամբ՝ միաժամանակ մեծ գաղափարական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով նրա տեղակալ Հուսեյն Սուսավիին, որն իր կողմնակիցների հետ հեռանալով «ԱՄԱԼ»-ի շարքերից, նոր կազմակերպություն հիմնադրեց՝ դառնալով Լիբանանում իրանական արտաքին քաղաքականության իրականացման գլխավոր գործիքներից մեկը[9]: Միևնույն ժամանակ, Նաբիհ Բերիի հետ իր քաղաքական հայացքները չկիսող «ԱՄԱԼ»-ի անդամ Իբրահիմ ալ-Ամինը, Մուհամմեդ Հուսեյն Ֆադլալահի[10] ակտիվ մասնակցությամբ, Բաալբեկում ձեռնամուխ եղավ լիբանանյան «Հիզբսոլահի» կազմակերպության[11] («Աստծո կուսակցության») ստեղծման գործին[12]: «Հիզբուլլահի» հետևորդների հոգևոր ու ֆինանսական կնքահայրը դարձավ ույաթոլլահ Խոմեյնին, որի կողմից կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական և ռազմական օգնությունը խորապես գաղափարականացված էր և խարխսխվում էր պատմական խոր արմատներ ունեցող շիական դոկտրինայի ու գաղափարական դրույթների վրա՝ բացառելով Իսրայելի պետության գոյության փաստի ճանաչումը:

Կազմակերպչական առումով «Հիզբսոլահը» շատ ավելի հիշեցնում էր ազատ կառույց ունեցող գաղափարական շարժում, քան կուսակցություն[13]: Այն գաղափարապես մոտ կանգնած խմբերի և զինյալ ջոկատների դաշինք էր, որոնք գործում էին Բեյրութում, Բեքաայի հովտում ու Հարավային Լիբանանում:

1985 թ. իրանամետ ծայրահեղական կազմակերպությունների մասնակցությամբ Իրանում կայացած խորհրդաժողովի ժամանակ «Հիզբալլահի», «ԱՄԱԼ Իսլամիի» և լիբանանյան այլ խմբավորումների առաջնորդներն իրենց երկարաժամկետ ծրագրային նպատակներ հայտարարեցին ալ-Քուդս սուրբ քաղաքի և Լիբանանի հարավի գրավյալ տարածքների ազատագրումը, Իսրայելի՝ մասնավորապես սիոնիզմի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և արևմտամետ արաբական վարչախմբերի[14] դեմ պայքարի ծավալումը, նահատակության և ինքնազոհաբերման գնով «Աստծո թշնամիներին» ոչնչացումը, Լիբանանում իրանական տիպի իսլամական հանրապետության ստեղծումը[15]:

Կազմակերպությունը մշտապես հետապնդել է համաիսլամական ու միջազգային նպատակներ, սրի անունն իսկ խոսում է պայքարի վերազ-

գային բնույթի մասին՝ որպես համամուսուլմանական շարժում, և իրեն դիտում է իբրև համաշխարհային իսլամական հեղափոխության մարտիկ: Կազմակերպության ռազմական թևի արագ աճը՝ զուգակցվելով ինքնազոհության ու նահատակության շիա ութկտրինայի կիրառման հետ, ասվելի քան 20-ամյա գործունեության ընթացքում դրսևորվել է արևմտյան[16] ու իսրայելական թիրախների դեմ «գլոբալ ջիհադի» մաս կազմող ահաբեկչական գործողություններում ու պատանդների առևանգումներում:

Հթե 1983-84 թթ. Բեյրութում՝ «Հիզբալահի» կողմից ամերիկյան ու ֆրանսիական թիրախների նկատմամբ ահաբեկչական գործողությունները նպաստեցին 1984 թ. երկրից ամերիկյան ու Բազմազգ Ուժերի (MNF) հեռացմանը, ապա 1983-85 թթ. իսրայելական օկուպացիոն ուժերի դեմ ռմբահարումները հանգեցրին 1985 թ. կենտրոնական Լիբանանից իսրայելական ուժերի դուրս բերմանը[17]: Վերոհիշյալ իրադարձությունները նպաստեցին շիա համայնքի դերի բարձրացմանը ինչպես միջազգային, այնպես էլ լիբանանյան քաղաքական թատերաբեմում[18]:

80-ականներվի երկրորդ կեսին «Հիզբալլահի» ռազմական և սոցիալ-տնտեսական դիրքերի ամրապնդումը, հատկապես «ԱՄԱԼ»-ի ավանդական ազդեցության շրջաններում, հանգեցրին երկու կազմակերպությունների միջև մրցակցության աճին, որը 1988 թ., ընդունելով ռազմական սուր բախումների տեսք, հնարավոր եղավ կասեցնել միայն Դամասկոսի միջամտությամբ: Հարկ է նշել, որ վերջինս «Հիզբալլահին» մշտապես դիտել է թե՛ որպես շահավետ պայմաններով Գոլանի բարձունքների վերադարձման ուղղությամբ Իսրայելի վրա ազդելու արդյունավետ լծակ, և թե՛ որպես տարածաշրջանում իսրայելական ուժերի ներկայության երկարաձգման պայմաններում սիրիական ռազմական զորակազմի պահպանման անհրաժեշտությունն արդարացնող միջոց: Թերևս դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Սիրիան՝ «Հիզբալլահին» տրամադրվող ռազմաքաղաքական և քարոզչական աջակցությանը զուգահեռ, մշտապես ձգտել է սահմանափակել կազմակերպության գործողությունների ազատությունը՝ հատկապես պաղեստինյան ինթիֆադային (ապստամբությանը) սատարելու հարցում: Ուստի Լիբանանում և ընդհանրապես տարածաշրջանում «Հիզբալահի» ու Դամասկոսի հետապնդած շահերի երբեմնի անհամատեղելիության հանգամանքով է պայմանավորված Իսրայելի դեմ գործողություններում «խաղի սահմանված կանոններին» հետամուտ լինելու ուղղությամբ Սիրիայի կողմից «Հիզբալլահին» ուշի ուշով հսկելու անհրաժեշտությունը:

Այնուհանդերձ, 1989 թ. փետրվարին ԱՄՆ-ի, Սաուդյան Արաբիայի և Սիրիայի հովանավորությամբ կնքված Տաիֆի համաձայնագրով[19] Սիրիային հաջողվեց կասեցնել «Հիզբուլլահի» զինաթափումը՝ նրան պահելով որպես զինվորական կառույց ունեցող միակ լիբանանյան կազմա-

կերպաթյան, որը 1991 թ. վերածվեց երկրի հարավում իսրայելական զորքերի դեմ գործող լիբանանյան դիմադրության ռազմական առաջատար ուժի:

Հետագայում, 1989 թ. այաթոլլաե Խոմեյնու մահվան[20], 1991 թ. Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ-ի միջազգային դերի բարձրացման, 1991 թ. կոմունիստական դաշինքի փլուզման, արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի թափսցյալ կարգավորման, Սիրիայի՝ ահաբեկչությանը աստարող երկրների պիտակից ազատվելու և Արևմուտքի հետ իր հարաբերությունների բարելավման ցանկությամբ էր պայմանավորված 1990-ականներին Արևմուտքի դեմ «Հիզբալլահի» միջազգային ահաբեկչական գործունեության ակտիվության թուլացման հանգամանքը, որը 1990-ականների սկզբներին զատ կիսառազմական ծայրահեղ տիպի խմբավորումից սկսեց աստիճանաբար վերածվել լիբանանյան հասարակական-քաղաքական ակտիվ ուժի: Կազմակերպության ներսում «չափավորների» (Հասան Նասրալլահի) ու «արմատականների» (Սուբհի Թուֆեյլիի) միջև փոխզիջում ապահովելուց և «ԱՍԱԼ»-ի հետ հաշտություն կնքելուց հետո (այս հարցում չի բացառվում Սիրիայի միջամտությունը), 1992 թ. աշնանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Հիզբալլահը»՝ «ԱՍԱԼ»-ի հետ դաշինքի կայացմամբ շնորհիվ, երկրի օրենսդիր մարմնում պատգամավորական ութ տեղ գրաղեցրեց՝ 2000 թ. խորհրդարանական ընտրություններին դրանք ավելացնելով ևս երկուսով[21]:

«Հիզբալլահի» հակաիսրայելական ակտիվ պայքարի արդյունքում 2000 թ. մայիսի 24-ին Լիբանանի հարավից իսրայելական զորքերի դուրս բերման (այս հարցում թերևս Սիրիայի կողմից Իսրայելի նկատմամբ հեռահար քաղաքական նկատառումները ևս դեր ունեցան), իսկ սեպտեմբերի 28-ից Իսրայելի դեմ այսպես կոչված պաղեստինյան երկրորդ ինթիֆադայի[22] աջակցության շնորհիվ «Հիզբալլահը» վերածվեց տարածաշրջանային ռազմաքաղաքական լուրջ գործոնի, որը նրան ակտիվ դերակատարության հնարավորության ընձեռեց ինչպես Լիբանանի, այնպես էլ ողջ տարածաշրջանի ներքաղաքական զարգացումներում: Այդ է անուղղակիորեն վկայում 2000 թ. հունիսին ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի մերձավորարևելյան շրջագայության ընթացքում Լիբանանում «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրաղահի հետ հանդիպման հանգամանքը, որը որոշ ԶԼՄ-ներ գնահատեցին որպես միջազգային հանրության կողմից կազմակերպության գործունեության օրինականության, կամ առնվազն՝ որպես քաղաքական կազմակերպության ճանաչման փաստ[23]:

Միևնույն ժամանակ, «Հիզբալլահն» իր գործունեությամբ ցույց տվեց, որ որոշ պայմաններում ի զորու է նաև բանակցել Իսրայելի հետ՝ համաձայնության գալով «իսրայելական անվտանգության գոտու» շուրջ՝ բնա-

կավայրերի վրա փոխադարձ չհարձակման վերաբերյալ պայմանավորվածության ձեռք բերման ուղղությամբ[24]:

Սակայն 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները և ԱՄՆ-ի հայտարարած «ահաբեկչության դեմ պատերազմը» սկսեցին սպառնալ «Հիզբալլահի» ռազմավարական վերոհիշյալ ձեռքբերումներին, քանզի ԱՄՆ-ի որդեգրած հետսեպտեմբերյան քաղաքականությունը (սալ-Ղաիդայի դեմ պայքարը, Իրաքի պատերազմը) մեծացրեց նաև «Հիզբսղլահի» և նրա հովանավոր պետությունների՝ որպես «չարիքի առանցքի» դեմ շարունակվող ռազմայշավում թիրախ դառնալու հավանականությունը[25]:

Հարկ եմ համարում նշել, որ ԱՄՆ-ի վարած «պատերազմն ահաբեկչության դեմ», ըստ իս, ցանկալի արդյունքի չի հասնի այնքան ժամանակ, քանի դեռ Սիացյալ Նահանգները պայքարում է ոչ թե ահաբեկչության *պատճառների*, այլև նրա *հետևանքների* դեմ:

AGHAVNI HARUTYUNIAN

LEBANON HIZBALLAH AS MILITARY AND POLITICAL FACTOR IN THE REGION

Hizballah is religious and politieal movement, which was born of terrorism in the 1980s, developed guerrilla warfare capabilities in the 1990s, and by the beginning of the new millennium, had matured into an important Middle East strategic player, capable of influencing the course of peace and war in the region. At the organizational level, Hizballah has evolved significantly from a loose, mysterious umbrella group under the guidance of Ayatollah Ruhollah Khomeini of Iran, to a movement collcetively led by various shaykhs and warlords, to a well-knit, disciplined organization under the guidance of its own charismatic leader, Hassan Nasrallah.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն.Հ.Հովհաննիսյան., Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982 թ., էջ 7-10:
2. 1932 թ. մարդահամարի տվյալների համաձայն, շիաները կազմում էին երկրի ընդհանուր բնակչության ընդամենը 18 %-ը, 1968 թ.՝ 30%-ը, իսկ 1990-ականներին բնակչության 1/3-ից ավելին (շիաները 1 մլն. էին, մինչդեռ երկրի ողջ բնակչությունը՝ 2,5-3 մլն.): Շիաները բնակվում էին երկրի հարավում, Բեյրութի հարավային արվարձաններում և Բեքաայի հովտում: Նրանք դարեր շարունակ կրոնական ու մշակութային սերտ կապեր են պահպանել Իրանի ու Իրաքի շիաների հետ:
3. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 178:

4. «ԱՄԱԼ»-ը հապավում է՝ «Դիմադրության լիբանանյան գումարտակներ» («Ավֆաջ ալ-մուքավիմա ալ-լուբնանիյա»), որը նաև «հույս» է նշանակում: Մինչ «ԱՄԱԼ»-ի ստեղծումը, շիաները Լիբանանի զինված խմբավորում չունեցող միակ համայնքն էին:
5. 1978 թ. Մուսամար Քաղաֆիի հետ հանդիպման նպատակով Լիբիա կատարած այցի ընթացքում Մուսա Սադրի խորհրդավոր անհետացումը շրջադարձային իրադարձություն հանդիսացավ «ԱՄԱԼ»-ի պատմության մեջ, քանի որ սեփական նահատակի ու իմամի առկայության հանգամանքը պոտենցիալ հնարավորություն էր ընձեռում շիա համայնքի ներքին տարաձայնությունների հաղթահարման համար (նրա անհետացումը կապվում էր 9-րդ դարում անհետացած վերջին շիա իմամի նահատակության շիա ղոկտրինայի և «ծպտյալ իմամի» պաշտամունքի հետ, որի վերադարձը սպասվում էր):
6. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 178:
7. Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus,- (Middle East Intelligence Bulletin), Vol. 4 No. 2. February 2002, p. 1. «Իրանի հիդափոխական պահակազորի» փասդարանները (մարտիկները), ուսումնափարժանքներ են անցկացրել «Հիզբալլահի» ռազմական թևը ներկայացնող մարտիկների հետ:
8. Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, Москва "Международные отношения", 2000, стр. 515
9. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке,- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей). М., 2001, стр. 3. Ինտերնետային հասցեն՝ (www.middleeast.narod.ru/research/livan.htm).
10. Այդ ժամանակ Ֆադլալահը ղեկավարում էր երկու միություններ՝ «Եղբայրական գերդաստանը» և «Լիբանանի իսլամական ուսանողների միությունը», իսկ հետագայում դարձավ «Հիզբալլահի» հոգևոր առաջնորդը՝ մուջթահիդը:
11. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002, p. 1. Ինտերնետային հասցեն՝ (www.meib.org/articles/0202_l1.htm).
12. Լիբանանյան «Հիզբալլահի» պատմության արմատները գնում են դեպի Իրաք, որը 1950-70-ականներին վերածվել էր լիբանանյան շիաների քաղաքական կենտրոնի (Իրաքի Նաջաֆ քաղաքը իսլամական հայտնի կենտրոն էր, որտեղ հաստատվել էին շիա նշանավոր այաթոլլահներից ու գիտնականներից շատերը): Այստեղ էր դասավանդել նաև այաթոլլահ Խոմեյնին իր 13-ամյա աքսորի՝ 1965-78 թթ. ընթացքում): 1960-ականների վերջերին այն ժամանակ միակ շիա իրաքյան արմատական ֆունդամենտալիստական «Կոչի կոալակցությունը» («Աղ-Դաավա») զուգահեռ ձևավորվեց լիբանանյան թևը, որի մեջ մտան «Հիզբալլահի» ներկայիս առաջնորդներ Մ.Ֆադլալահը, Ս.Թուֆեյլին, Խ.Կուրանին, Մ.Շամսուդին, Մ.Սադրը: «Դաավիստնե-

րի» թվին, որոշ տվյալների համաձայն. պատկանում էին նաև «Հիզբալլահի» ներկայիս գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահը, նրա տեղակալ Նաիմ Քասիմը, Մուհամմեդ Յազբեկը. Հուսեյն Հասուրան և այլոք: Վերջիններիս գործունեության սկիզբը կապված էր «բաալբեկյան աստվածաբանական դպրոցի» հետ, որտեղ ակտիվորեն ուսուցանվում էր Մուսադրի ուսմունքը: 1985 թ. մանիֆեստում «Հիզբալլահի» ղեկավարությունն իր հավատարմությունն արտահայտեց այաթոլլահ Խոմեյնիին և հայտնեց Լիբանանում իսլամական պետության հաստատման իրենց մտադրության մասին:

13. Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմիններն են՝ Հոգևոր առաջնորդը, Հանձնաժողովը, Խորհրդակցական մարմինը, Քաղբյուրոն, Կենտրոնական գործադիր մարմինը: Նրա «Իսլամական դիմադրություն» ասնվամբ խմբավորումը լավ կազմակերպված, գաղտնի գործող և բարձր որակավորմամբ 300-500 արհեստավարժ մարտիկներից կազմված ռազմական կառույց է, որը բավականաչափ անկախ է իր գործողություններում, և որի կապը կազմակերպության քաղաքական ղեկավարության հետ ազայմանական ու սահմանափակ բնույթ է կրում: 1990-ականներին «Հիզբալլահի» անդամների թիվը կազմում էր 8-10.000 մարդ: Կազմակերպությունը ահաբեկչությունն ու պատանդների առևանգումներն օգտագործում է որպես պայքարի ռազմավարական արդյունավետ միջոց:
14. Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Հորդանան, Քուվեյթ, ԱՄԷ:
15. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 182:
16. Ըստ «Հիզբալլահի», ԱՄՆ-ը. Ֆրանսիան և Բրիտանիան իրենց սկզբունքային թշնամիներն են՝ կապված Մերձավոր Արևելքում վերջիններիս վարած գաղութային ու նեոիմպերիալիստական քաղաքականության հետ: «Հիզբալլահի» ահաբեկչական գործունեությունը տարածվում է նաև Հարավային Ամերիկայում, Ասիական երկրներում, Կանադայում, Շվեդիայում և այլ երկրներում արևմտյան՝ հատկապես ամերիկյան և իսրայելական շահերը ներկայացնող անձանց ու հաստատությունների նկատմամբ: Մանրամասն տես Ely Karmon, "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq,- Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No. 46, December 2003, p. 6-8.
17. Մանրամասն տես Polk William "The Arab World Today", Harward University Press, 1991, p. 355.
18. Itimar Rabinovich, The War For Lebanon 1970-1985, Cornell University Press, 1985, p. 179.
19. Ա.Ա.Հարությունյան, Սիրիա-լիբանանյան Թայեֆի համաձայնագիրը,-Հանդես Երևանի համալսարանի (գիտահանրամատչելի լրատու), N 1(96), Երևան-2000, էջ 111-117: «Հիզբալլահը» սկզբում չընդունեց համաձայնագրի պայմանները. որոնց համաձայն խորհրդարանի պատգամավորական տեղերը համամասնորեն բաժանվում էին քրիստոնյա և մուսուլման ներկայացուցիչների միջև՝ բացառելով երկրի նախագահի ու վարչապետի պաշտոնի ստանձնելու միջոցով կառավարության նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունը:

20. Խոմեյնու մահվանից հետո նոր նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին հրաժարվեց Լիբանանում իսլամական պետության ստեղծման նպատակով «Հիզբալլահին» ցուցաբերվող օժանդակությունից առավել մեծ ուշադրություն հատկացնելով Իրանի ներքին գործերին և արտաքին առևտրի զարգացմանը: Նա դատապարտում էր նաև կազմակերպության կողմից թշնամիների հետ սակարկման նպատակով պատանդներ վերցնելու ռազմավարությունը: Այնուհանդերձ, որոշ տվյալների համաձայն, «Հիզբալլահին» տրամադրվող Իրանի ամենամյա ֆինանսական օգնությունը կազմում է 65-100 մլն. դոլար:
21. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002. p. 5-7.
22. «Հիզբալլահը» համագործակցում էր պալեստինյան ապստամբների հետ՝ նրանց ցուցաբերելով ռազմական աջակցություն՝ ինչպես ուսումնավարժանքների և զինամթերքի տրամադրման, այնպես էլ Շեբաա ֆերմայի շրջանում Իսրայելի Պաշտպանության Ուժերի դեմ ասիմետրային ռազմական գործողությունների իրականացման ձևով:
23. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке,- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей), М., 2001, с.15.
24. Gary C. Gambill, Hassan Nasrallah Secretary-General of Hezbollah, (Middle East Intelligence Bulletin), Vol. 6, No.2/3, February-March 2004, p. 4-5. Ինտերնետային հասցեն՝ (www.meib.org/articles/0402_Id.htm). Իսրայելի և Հարավային Լիբանանի Բանակի (SLA) դիրքերի ուղղությամբ «Հիզբալլահի» զրոհների արդյունավետության հանգամանքը պայմանավորված էր պարտիզանների կողմից «անվտանգության գոտու» մերձակայքի գյուղերը որպես ապաստարան օգտագործելու մարտավարության կիրառմամբ, որոնց նկատմամբ 1993 թ. հուլիսին Իսրայելի կողմից օդային ու հրետանային 7-օրյա ռմբակոծություններից հետո «Հիզբալլահը» 142 կատյուշային հրթիռներ արձակեց հակառակ ուղղությամբ: Արդյունքում, Իսրայելն ու «Հիզբալլահը» Լիբանանի ու Իսրայելի քնակավայրերի վրա փոխադարձ չհարձակման ուղղությամբ ոչ պաշտոնական համաձայնություն ձեռք բերեցին:
25. Ely Karmon. "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq,- Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No.46, December 2003, p. 22.